ԿՐԹԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ՝ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 15-ին, Վրաստանի դպրոցներում մեկնարկեց հանրակրթական գործընթացը: Շնորհավորում եմ բոլոր աշակերտներին, ուսուցիչներին, ծնողներին ու ողջ հանրությանը եւ հատկապես կյանքի իրենց նոր, կարեւորագույն փուլը սկսած մեր փոքրիկներին՝ առաջին դասարանցիներին: Նրանք առաջին անգամ մուտք գործեցին դասասենյակ, որտեղ յուրաքանչյուր աշակերտին դիմավորեց անվտանգ, ջերմ ու առողջ ուսումնառատ միջավայրը:

Ցանկանում եմ ի սրտե ողջունել մեր թանկագին ուսուցիչներին, նրանց, ովքեր իրենց արհեստավարժությամբ եւ անձնվեր աշխատանքով հավատարիմ ծառայում են մեր երկրի ապագային:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորին, մաղթում արդյունավետ եւ խաղաղ ուսումնական տարի:

«ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ» ՀՆՉԵՑ ԾՈՓԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵՌԱՀԱՐԿ ԴՊՐՈՑՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծոփ գյուղի նորակառույց եռահարկ դպրոցում հանդիսավոր պայմաններում մեկնարկեց նոր ուսումնական տարին:

Թեա Ախվլեդիանին Ծոփում

Միջոցառմանը ներկա էին եւ աշակերտներին, մանկավարժներին ու ծնողներին նորակառույց դպրոցում առաջին ուստարվա մեկնարկը շնորհավորեցին Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետական նախարար Թեա Ախվլեդիանին, Վրաստանի կրթության ու գիտության նախարարի առաջին տեղակալ Թամար Մախարաշվիլին, Վրաստանի խորհրդարանի Մառնեուլիի եւ Գարդաբանիի մեծամասնական պատգամավոր Զաուր Դարգալին, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Իր խոսքում, պետնախարարն ուշադրություն բեւեռեց քաղաքացիական իրավահասարության եւ ինտեգրման գործընթացի վրա, խոսեց որակյալ կրթության ապահովման նշանակության մասին:

Ինչ վերաբերվում է մունիցիպալիտետի մյուս հայկական կրթօջախներին, ապա այս տարի Շահումյան ավանի թիվ 1 դպրոցում՝ 28 առաջին դասարանցի է, նույն ավանի թիվ 2 դպրոցի առաջին դասարանում աշակերտների թիվը 6 է, շրջանավարտներինը՝ 12: Այստեղից 4-ը ընդունվել են «1+4» ծրագրով, երկուսը՝ 100 տոկոսանոց դրամաշնորհի ստացել:

Կարմիր գյուղում ունենք 11 առաջին դասարանցի եւ 8 շրջանավարտ, Ծերեթելիում՝ առաջին դասարանում՝ 5 աշակերտ եւ 3 շրջանավարտ: Աղքյորփիում՝ 9 առաջին դասարանցի եւ 15 շրջանավարտ, Դամիայում՝ 5 առաջին դասարանցի եւ 4 շրջանավարտ, Խոժոռնիում 3 առաջին դասարանցի եւ 8 շրջանավարտ, Գյուլիբաղի իննամյա դպրոցում 4 առաջին դասարանցի է, իսկ Չանախչիում՝ 2 առաջին դասարանցի ու 3 շրջանավարտ:

Մունիցիպալիտետի հայկական դպրոցների շրջանավարտներից 21-ը «1+4» ծրագրով ընդունվել են Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ, շատերը դրամաշնորհ ստացել, 3-ը՝ քոլեջում, իսկ 7-ն իրենց ուսումը կշարունակեն Հայաստանում:

Շնորհավորում եմ յուրաքանչյուրին, շնորհավորում նրանց մանկավարժներին, դասախոսներին, որոնք նույն նվիրումով շարունակում են իրենց գործն ու մարդ ձեւավորում, նպաստում արժանի քաղաքացու ձեւավորմանը:

ԱՐՍԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Մառնեուլիի մունիցիպալիտետի Խոժոռնի, Շահումյան բնակավայրերի եւ Բարձրալեռ գոտուց Սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր

ՆԻՆՈԾՄԻՆԴԱ. ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ

Չարաբաստիկ համավարակը մի ամբողջ երկու տարի խոչընդոտեց ուսումնական գործընթացը, քանի որ հեռավար ուսուցումը երբեք համեմատելի չէ դպրոցում հնչող զանգի, դասասենյակներում ընթացող արդյունավետ դասընթացի հետ: Ուստի, մեկ այլ կարոտով ու սպասումով դիմավորեցինք 2022/2023 ուսումնական տարին, որը, հուսով եմ, անխաթար ընթացք է ունենալու: Նինոծմինդայի շրջանում գործում է 38 հանրային դպրոց, որից 30-ը հայկական են, 5-ը՝ վրացական, իսկ 3-ը՝ ռուսական: 2022-2023 ուսումնական տարում առաջին դասարան է ընդունվել 331 աշակերտ: Շրջանում աշակերտների ընդհանուր թիվը 3831 է, դպրոցների աշխատակիցներինը՝ 1200: Ուսուցիչներն ակտիվ մասնակցում են մասնագիտական որակավորման բարձրացման քննություններին, արդյունքում՝ մեծամասնությունը ձեռք է բերել ավագ, իսկ շատերն առաջատար ուսուցչի կարգավիճակ: Շրջանում ունենք նաեւ մեկ մենտոր ուսուցչուհի: Առաջին դասարանցիներն ու դասվարներն «Իմ առաջին համակարգիչը» ծրագրի շրջանակում ստացել են համակարգիչներ:

Նինոծմինդայի կրթական ռեսուրս-կենտրոնը սիրով շնորհավորում է նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, մաղթում, որ այն հարուստ լինի ձեռքբերում-նվաճումներով:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ
Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ՝ 675 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

Նորից հանդիսավորությամբ հնչեցրինք ուսումնական «Առաջին զանգն» ու նորովի գործի լծվեցինք՝ հանուն մեր երկրի ու մեր ժողովրդի բարօրության: Նորից սկսեցինք մեր լուրջ ու պատասխանատու աշխատանքը, որպեսզի դպրոցն ավարտող յուրաքանչյուրը կյանք մտնի որպես օրինակելի ու լիիրավ քաղաքացի: Ախալքալաքիի մունիցիպալիտետի բոլոր դպրոցներն ուսումնական տարին սկսեցին կազմուպատրաստ: Դպրոցական կյանքի սկիզբն ավետող «Առաջին զանգը» հնչեց մունիցիպալիտետի 675 առաջին դասարանցիների համար՝ ընդունելով նրանց լուսավոր ու կահավորված դասասենյակներում: Նրանցից յուրաքանչյուրը ստացավ իր համակարգիչն ու անհրաժեշտ դասագիրքը: Համոզված եմ, այս փոքրիկներն իրենց ուսուցիչների հպարտությունն են դառնալու: Ուժ ու կորով եմ մաղթում բոլոր ուսուցիչներին, ինչպես նաեւ ամուր առողջություն: Թող «Առաջին զանգը» լինի դպրոցական առօրյայի ամենօրյա ավետիսը, որի ղողանջն արձագանքվի տարվա առատ հաջողություններում:

ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ
Ախալքալաքիի ռեսուրս-կենտրոնի ղեկավար

ՆՈՐ ՈՒՍՏԱՐԻՆ՝ ՆՈՐ ՀՈՒՅՍՈՎ ՈՒ ԼՈՒՅՍՈՎ

Սիրով շնորհավորում եմ մեր երկրի բնակչությանը ուսումնական տարեսկզբի կապակցությամբ: Յուրաքանչյուր այս օրը նոր հույս ու լույս է բերում, որովհետեւ կրթօջախ մտնող ու այն ավարտող յուրաքանչյուրը երկրի ապագան կառուցողն է դառնում՝ գյուղի, քաղաքի ու շրջանի բնակչության բարեկեցության եւ, ընդհանրապես, լինելիության գրավականը: Ախալցիխեի մունիցիպալիտետում ունենք 38 դպրոց, այստեղից 11-ը հայկական են: Շրջանն ունի 519 առաջին դասարանցի, որից 65-ը հայկական դպրոցներում: Ախալցիխեի թիվ 3 հայկական դպրոցն ունի 45 առաջին դասարանցի, քաղաքի «տավառնի» կոչվող թաղամասի երկրորդ դպրոցը՝ 5 առաջին դասարանցի:

Մունիցիպալիտետի հայաբնակ գյուղերում հետեւյալ պատկերն է՝ Վալեի թիվ 3 դպրոցում՝ 3 աշակերտ, Փոքր Պամաճում՝ 10, Սազելում՝ 6, Սխվիլիսիում՝ 2, Ճաճարակում՝ 4, Ծինուբանիում՝ 3, Ծղալթբիլայում՝ 6, Ծուղրութում՝ 26: Ի դեպ, այստեղ ծրագրվում է նոր դպրոցի կառուցում: Շնորհավորում եմ բոլոր փոքրիկներին, թող խաղաղ երկինքը նրանց լիարժեք կրթության անխափան երաշխիքը դառնա:

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Ախալցիխեի փոխքաղաքապետ

ԽԱՉԿՈՎԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՈՒՍՏԱՐԻՆ ՍԿՍԵՑԻՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԱԾ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ



«Վրաստան» թերթի միջոցով ուզում եմ շնորհավորանքս հղել մեր երկրի եւ հատկապես Ծալկայի յուրաքանչյուր մանկավարժին ու աշակերտին, մաղթել բարի եւ անխափան, հաջողություններով պսակվող տարի: Մեր մունիցիպալիտետը տարին սկսում է Կոխտա գյուղի նոր եւ հայաբնակ Խաչկով գյուղի հիմնանորոգված դպրոցների գործարկմամբ: 2 դպրոցներն էլ համապատասխանում են ժամանակակից չափանիշներին՝ ներքին հարդարման, կահավորման եւ տեխնիկական հագեցվածության տեսանկյունից:

Ծալկայի մունիցիպալիտետն ունի 247 առաջին դասարանցի, այստեղից՝ 77-ը հայկական դպրոցներում: Եթե մանրամասնեմ, ապա պատկերը հետեւյալն է. Աշխալա գյուղն ունի 10 առաջին դասարանցի, դպրոցում ուսանում է 94 աշակերտ, Բուռնաշեթի դպրոցում այս տարի 4 առաջին դասարացի հաճախեց, աշակերտների ընդհանուր թիվը 38 է, Դարաքով գյուղում՝ 8 առաջին դասարանցի, դպրոցի աշակերտների ընդհանուր թիվը 80 է, Դաշբաշում ունենք 1 առաջին դասարանցի, աշակերտների ընդհանուր թիվը՝ 17 աշակերտ, Ղզլքիլիսայում՝ 16 առաջին դասարանցի, դպրոցում՝ 158 աշակերտ, Ղուշչիում՝ 5 առաջին դասարանցի, աշակերտների ընդհանուր թիվը՝ 41, Նարդեվան գյուղում առաջին դասարանցիների ամենամեծ՝ 21 թիվն է, դպրոցն ունի 186 աշակերտ, Օզնիում՝ 5 առաջին դասարանցի, ընդհանուր՝ 52 աշակերտ, Չիվքքիլիսա գյուղն ունի՝ 5 առաջին դասարանցի, ընդհանուր թիվը՝ 53, Խաչկովի նորակառույց դպրոց հաճախեց 12 առաջին դասարանցի, աշակերտների ընդհանուր թիվը՝ 103 է: Նորից ու նորից շնորհավորում եմ բոլորիս, բարով ու եռանդով վայելենք տարին:

ՅՈՒՐԻ ԽԵՉՈՅԱՆ
Ծալկայի մունիցիպալիտետի կրթության, մշակույթի եւ սոցիալական հարցերի ծառայության պետ

ԿՐԹԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ՝ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՈՐ ՈՒՆԵՆՔ 6 ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Թբիլիսիի 85-ամյա կրթօջախը կրկին բացում է դռներն իր ու իրեն կարոտած սաների եւ, հատկապես ամենափոքրիկների՝ 29-ը առաջին դասարանցիների առջեւ: 29 նորեկ ունենք, որոնք կյանքի իրենց ամենահիշվող ուղին սկսելու են այս հարուստ պատմությամբ դպրոցում: 104-ի աշակերտների մեջ հայտնիները շատ են, ու տարեցտարի այս բանակն առավել է մեծանում, առավել գրանցում հաջողություններ ու խթանում մանկավարժների աշխատանքը: Ինչպես չհպարտանալ, եթե անցած ուսումնական տարվա շրջանավարտներից 13-ն ընդունվել են Վրաստանի բուհեր, 5-ը՝ 100 տոկոսանոց դրամաշնորհ ստացել ու 6 ոսկե մեդալով ավարտել դպրոցը, իսկ 2 աշակերտ ազգային ուսումնական օլիմպիադայում գումարային մրցանակի է արժանացել: Ցավոք, դպրոցի բակում ընթացող շինարարական աշխատանքները թույլ չտվեցին ավանդական շուքով սկսել 2022/2023 հոբելյանական ուսումնական տարին, թեեւ նույն ավանդականը մնաց «ոգու շուքը»: Մեր 250 հին ու նոր սաներին դիմավորեցինք նույն սիրով ու ջերմությամբ: Բարձրացրինք Վրաստանի դրոշը, հնչեցրինք պետական օրհներգն ու ապա, նոր գիտելիքի սերտման զանգն ավետեցինք մեր դպրոցում եւս: Շնորհավորում եմ հատկապես մեր փոքրիկներին, թող հասնեն իրենց նպատակներին ու արդարացնեն ծնողների սպասելիքները, խաղաղ ու բարեկեցիկ երկրում:

ԻՐԻՆԱ ԺԱՄԿՈՉՅԱՆ
Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի տնօրեն

ԹԻՎ 103 ԴՊՐՈՑՈՒՄ «ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ» ՂՈՂԱՆՋԵՑ ՈՍԿԵԶՕԾ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Հասմիկ Պապիկյան

«Առաջին զանգի» ղողանջների ներքո, համավարակով պայմանավորված երկամյա ընդմիջումից հետո, կրկին մարդաշատ էր մայրաքաղաքի թիվ 103 հանրային դպրոցը, ուր գործում են վրացական ու հայկական բաժիններ: Տոնական տրամադրությամբ սկսվեց նոր ուսումնական տարվան նվիրված հանդիսությունը, որը բացեց դպրոցի ուսմասվար Հասմիկ Պապիկյանը: Նա խոսքը փոխանցեց կրթօջախի տնօրեն Արչիլ Չխաիձեին, ով խոսեց հաստատության ձեռքբերումների, Ազգային ուսումնական ծրագրով ներդրվող նոր փոփոխությունների մասին: Ելույթով հանդես եկան «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի ԿԳ նախարարության աշխատակից Կարինե Մանուկյանը, ուրիշներ:

Վրաստանի օրհներգի հնչյունների ներքո բարձրացվեց պետական դրոշը, ապա «Առաջին զանգի» ղողանջների ու հաջորդած ոսկեզօծ հրավառությամբ ավարտվեց տոնական մասը: Դպրոցի տնօրենի եւ ուսմասվարի ուղեկցությամբ Վ.Բայբուրթյանն ու Կ.Մանուկյանը այցելեցին հայկական բաժնի դասարաններ եւ զրուցեցին աշակերտների հետ: Կրթօջախի նախորդ ուսումնական տարվա 43 շրջանավարտից 39 դարձել է ուսանող, որից 3 ոսկե մեդալակիր 100% դրամաշնորհով է ընդունվել բուհեր: 2022-2023 ուսումնական տարում դպրոցում բացվել է 5 առաջին դասարան, հայկական բաժնի առաջին դասարանցիների թիվը 13-ն է:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱԼՆԻՍ-ԽԱՉԵՆ. ՈՒՐԱԽ ԵՆՔ, ՈՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԹԻՎԸ ՏԱՐԵՑՏԱՐԻ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

Սիրելի բոլնիսցիներ, բոլնիսխաչենցիներ, կիանեթցիներ, եւ ընդհանրապես, համայն Վրաստան, շնորհավորում եմ ուսումնական տարեսկզբի ավետաբեր առիթով: Սթափեցնող «Առաջին զանգը» հնչել է ու դասարան բերել իր սիրելի սաներին, որոնք համոզված եմ նոր ավյունով ու մոտեցմամբ են շարունակելու բոլոր ժամանակներում թերեւս ամենակարեւոր գործընթացը՝ ուսումնառումը: Ուրախությամբ նշեմ, որ այս տարի Բոլնիս-Խաչենի դպրոցում 25 առաջին դասարանցի ունենք, նախորդ տարվա տասնյոթի համեմատ: Սա գալիս է վկայելու, որ գյուղում շունչ կա, կյանք կա: Մեր աշակերտների ընդհանուր թիվը 205 է: Անցած ուստարում ունեինք 8 շրջանավարտ, այստեղից 3-ն ընդունվել են Վրաստանի եւ Հայաստանի բուհեր, 3-ը՝ քոլեջ: Ցավոք, կցյալ՝ Կիանեթի գյուղի դպրոցում, այս տարի առաջին դասարան չունենք: Այստեղ աշակերտների ընդհանուր թիվը 10 է, ուսումն ինքնամյա է, դասարանները գործում են կոմպլեկտավորված: Ինչ վերաբերում է Բոլնիսի քաղաքի թիվ 2 հայկական դպրոցին, ապա այստեղ ուսանում է ընդհանուր թվով 54 աշակերտ, առաջին դասարանցիների թիվը 6 է, այստեղից երկուսը բուհական կրթությունը շարունակելու են Հայաստանում: Նրանց գիտելիքների հարուստ պաշար եմ մաղթում, ու նաեւ գյուղ վերադառնալու, այստեղ ինքնադրսեւորվելու նպաստավոր պայմաններ:

ՀՐԱՆՈՒՇ ԽՈՒԲԼԱՐՅԱՆ
Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղի հանրային դպրոցի տնօրեն

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«...ՈՉ ԲՈԼՈՐ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՐԾԵՆԱԼ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՅՈՒԹՅԱՄԲ»

Մեր զրուցակիցն է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանն է: Զրուցել ենք կենտրոնում գործող «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի գործունեության ու անհրաժեշտության մասին:

- Շնորհավորում եմ, 2022-2023 ուստարում արդեն տասներկուերորդ սերունդն եք ճանապարհելու: Կենտրոնի ֆեյսբուքյան էջից տեղեկացանք, որ նախակրթարանը 15 փոքրիկ նորեկ ունի: Արդյոք, շարունակվո՞ւմ է ընդունելությունը, եւ ինչպե՞ս է այն իրականացվում:

- Շնորհակալ եմ: Ես նույնպես շնորհավորում եմ բոլորիս ուսումնական տարեսկզբի առիթով: Այո՛, չնայած, որ սեպտեմբերի 15-ից նախակրթարանը սկսել է իր աշխատանքը, մենք դեռ շարունակում ենք գրկաբաց սպասել փոքրիկներին, քանի որ թույլատրելի թիվը դեռ չի լրացել: Նախակրթարանում այսօր ընդհանուր թվով 27 սան ունենք, այստեղից 12-ը՝ տարվա շրջանավարտներն են: Նախակրթարան կարող է ընդունվել 3 տարեկանն ու 6 ամիսը լրացած յուրաքանչյուր երեխա: Պահանջվող փաստաթղթերի փաթեթը նույնն է, ինչ պետական մանկապարտեզներում (նոտարով հաստատված ծննդականի պատճեն, եթե այլ երկրի քաղաքացի է՝ թարգմանությամբ, ծնողների անձը հաստատող փաստաթղթի պատճեն, 2 լուսանկար, տեղեկանք առողջության մասին): Նախակրթարանը գործում է երեքշաբթիից՝ ուրբաթ, 9:30-16:00-ը: Մեր հասցեն է՝ Արմազիի փողոց 18: Սիրով սպասում ենք...

- Ինչպիսի՞ ծրագրով եք առաջնորդվում, ովքե՞ր են դաստիարակները:

- Այս տարիների ընթացքում շատ դաստիարակներ են փոխվել: Նրանցից յուրաքանչյուրն իր հետքն է թողել նախակրթարանի զարգացման մեջ: Շնորհակալ եմ բոլորին: Այսօր դաստիարակներն են Աիդա Բազոյանը, Սյուզաննա Բրուտյանը, դայակը Երինազ Մարտիրոսյանն է: Մեզ մոտ ուսուցումն ընթանում է հատուկ կազմված ծրագրով, փորձել ենք համատեղել հայկական ու վրացական ծրագրերը: Հիմնական առարկաներից բացի, ունենք նաեւ «Քչից շատից, ամեն ինչից» հատուկ դասաժամը, երբ երեխաներն ստանում են տարրական գիտելիքներ բնության, տիեզերքի եւ այլնի մասին:

- Պատմեք մի փոքր նախակրթարանի ստեղծման մասին:

- Նախակրթարանը բացվեց 2011 թվականի հոկտեմբերին: Սկսել ենք 8 աշակերտով, հաջորդող տարիներին ունեցել նույնիսկ 60 սան: Երեխաների առատ հոսքը դադարեց համավարակի տարիներին, որի բացասական հետեւանքներն այժմ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությամբ ու հոգեւոր դասի անմիջական մասնակցությամբ փորձում ենք շտկել: Գործում է երկու խումբ՝ ավագ եւ կրտսեր: Թեմն իր նախակրթարաններն ունի Բաթումիում, Ախալքալաքիի մունիցիպալիտետի Արագովա գյուղում եւս: Եղել են ժամանակներ եւ ոչ հեռու անցյալում, օրինակ 70-ականներին, երբ Թբիլիսիում ունեցել ենք հայկական նախադպրոցական կրթական հաստատություններ:

- Այս տարի նախակրթարանի 19 շրջանավարտից 16-ը իրենց ուսումը կշարունակեն մայրաքաղաքի թիվ 104 եւ 103 հանրային դպրոցներում: Ինչպե՞ս եք նպաստում երեխային հայկական դպրոց տանելու ծնողի որոշմանը:

- Եթե անկեղծ լինեմ, ապա պետք է ասեմ, որ երբ սկզբնավորվում էր նախակրթարանը, մեր առաքելության հիմքում բոլոր սաներին հայկական դպրոց ուղղորդելու գաղափարն էր: Իրականում սա անհնար դարձավ, որովհետեւ յուրաքանչյուր ծնող ինքն է որոշում, թե որտեղ պետք է սովորի իր երեխան: Հետո մեր առջեւ նպատակ դրեցինք հնարավորն անել տեսանելի դարձնելու համար մայրենիով սովորելու քաղցրությունը: Մանավանդ որ, Վրաստանն այդ մեծ հնարավորությունն ընձեռում է: Չէ՞ որ ոչ պետական լեզվով պետական դպրոցի գոյությամբ ոչ բոլոր հարուստ Արեւմտյան երկրները կարող են հպարտանալ: Ես հորդորում եմ ծնողներին տանել իրենց երեխաներին հայկական դպրոց, շատերին երբեմն՝ համոզում, չէ՞ որ միայն հայկական դպրոցում է երեխան սովորում միաժամանակ 4 լեզու, իսկ հետո հնարավորություն ունենում բուհական կրթությունը ստանալ «1+4» արտոնյալ ծրագրով...

- Ինչո՞վ է հատկապես գրավիչ «Մովսես Խորենացին»...

- Երեւի նրանով, որ մեր երեխաները ստանում են նաեւ քրիստոնեական դաստիարակություն: Նախակրթարանի յուրաքանչյուր օրը սկսվում է եկեղեցում ժամերգությանը մասնակցությամբ եւ հոգեւոր հայրերի օրհնությամբ: Այնուհետեւ դահլիճում երաժշտության հնչյունների ներքո երեխաները մարզվում են ու անցնում առօրյա դաս-զվարճանքի:

Մանկավարժ-դաստիարակները անցկացնում են գրաճանաչության, հայերենի, վրացերենի, անգլերենի, թվաբանության, նկարչության, երգի, պարի դասեր: Մեզ մոտ հաճախող երեխաների գերակշիռ մասը հայկական ընտանիքներից են, բայց երբեմն հայերեն չեն խոսում ու հենց այստեղ են սովորում հայ խոսքը, երգը, պարը: Ամեն ինչ անում ենք, որպեսզի «ընտանեկան» միջավայր ստեղծենք ու երեխաները սովորեն ազատ ու անկաշկանդ արտահայտել իրենց մտքերը: Հայտնի խոսք է, մինչեւ չսիրես ու չգնահատես քոնը, չես սիրի ու չես գնահատի ուրիշինը...

Զրուցեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԵՐԹԱԿԱՆ ՍԱԴՐԱՆՔ՝ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Սեպտեմբերի 13-ին, ժամը 00:05-ից, Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները Հայաստանի Հանրապետության Գորիսի, Սոթքի եւ Ջերմուկի ուղղությամբ հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ: Հակառակորդը կիրառում է նաեւ ԱԹՍ-ներ: Հայաստանի զինված ուժերը համարժեք պատասխան են տալիս:

Սեպտեմբերի 16-ի դրությամբ, հայկական կողմից զոհվել է 135 զինծառայող:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ելույթ ունեցավ Հայաստանի Ազգային ժողովում եւ պատգամավորներին մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց ստեղծված իրավիճակի ու հիմնախնդրի կարգավորման համար կառավարության ծրագրերի մասին:

Հայաստանի տարածքում ռազմական գործողությունները սկսվելուց անմիջապես հետո Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց ունեցավ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի, Իրանի նախագահ Իբրահիմ Ռայիսի, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրամիության արտաքին քաղաքացանության եւ անվտանգության հարցերով հանձնակատար Ջոզեֆ Բորելի հետ, մանրամասն տեղեկություն ներկայացնելով սահմանագծում ստեղծված իրավիճակի մասին:

Ֆրանսիայի նախաձեռնությամբ, գումարվեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի արտահերթ նիստ, որտեղ քննարկվեց հայ-ադրբեջանական սահմանագծում ստեղծված իրավիճակը:

Հայաստանը օգնության խնդրանքով դիմել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ):

ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ անցկացվեց Անվտանգության խորհրդի ընդլայնված կազմով խորհրդակցություն, որին, Անվտանգության խորհրդի անդամներից բացի, մասնակցում էին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը:

Քննարկվել են Ադրբեջանի կողմից Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ ագրեսիայի հետեւանքով ստեղծված իրավիճակը, ինչպես նաեւՀայաստանի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության ուղղությամբ իրագործվելիք քայլերը: Մտքեր փոխանակվեցին ԼՂ հարցի կարգավորման բանակցային գործընթացի ընթացիկ վիճակի մասին:

Ընդգծվեց արտաքին սպառնալիքներին դիմակայման համատեքստում համաժողովրդական համերաշխության եւ համախմբվածության հրամայականը:

ԸՆԴԳԾՎԵԾ ՀԱՅԱՍՏԱՆ-ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 12-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Համաշխարհային բանկի Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի փոխնախագահ Աննա Բյերդենին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը կարեւորել է Հայաստան-Համաշխարհային բանկ գործընկերությունը, որի 30-ամյակը լրանում է այս տարի սեպտեմբերին, եւ որի շրջանակում մեր երկրում իրագործվում են տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր թե' պետական, թե' մասնավոր հատվածներում:

Զրուցակիցները գոհունակություն հայտնեցին երկկողմ գործընկերության շրջանակում առ այսօր կատարված աշխատանքներից եւ մտքեր փոխանակեցին դրա զարգացման հեռանկարների շուրջ: Երկուստեք կարեւորվեցին կրթության, ենթակառուցվածքների, դատական, թվայնացման, առողջապահության, հանրային կառավարման եւ այլ ուղղություններով փոխգործակցությունը:

Նիկոլ Փաշինյանը երախտագիտություն հայտնեց Համաշխարհային բանկին, ՀԲ հայաստանյան գրասենյակին արդյունավետ գործընկերության համար եւ վերահաստատեց Կառավարության պատրաստակամությունը՝ զարգացնելու ու հարստացնելու այն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նախաձեռնություններով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԲԱՆԱԿ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հայտարարել է, որ 24 միլիոն դրամ վճարելու պայմանով պարտադիր զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակելու նախագիծն արհեստավարժ բանակ ունենալու հնարավորություն կտա:

- Այսօր շատ ու շատերը մինչ օրս տարբեր ձեւակերպումներով ազատվել են բանակից: Եվ, կարծում եմ, հետայսու սահմանված գումարը մեզ թույլ կտա շատ ավելի արհեստավարժ բանակ ու շատ ավելի պրոֆեսիոնալ զինվորականներ ունենալ,- ասել է Ալեն Սիմոնյանը:

Հարցին, թե նախագծի իրագործման արդյունքում բանակայինների թիվը կավելանա՞, թե՞ կնվազի, Սիմոնյանը պատասխանել է.

- Մեկ զինվորի՝ նման ճանապարհով ազատվելը հնարավորություն կտա մեզ երկու արհեստավարժ զինվորական ունենալ:

Պաշտպանության նախարարությունն առաջարկում է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ուսումնական փուլը լրանալուց հետո (միջինը՝ չորսուկես ամիս), զինծառայողի կողմից ՀՀ պետական բյուջե 24 միլիոն դրամ վճարելու պայմանով՝ վաղաժամկետ արձակել պարտադիր զինվորական ծառայությունից: «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը պաշտպանական գերատեսչությունը հանրային քննարկման է դրել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԼԻՆԻ ՄԻՆՉԵՎ 28 ՏԱՐԵԿԱՆ

Հայաստանի Ազգային ժողովը քննարկեց կառավարության ներկայացրած օրենքի նախագիծը: Առաջարկվում է սահմանել այն, որ բուհերում սովորելու համար զինծառայությունից տարկետում ստացածները զորակոչի ենթակա լինեն ոչ թե մինչեւ 27, այլ 28 տարեկան:

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը:

Նրա խոսքով, տարկետման տրամադրման պայմանները, բուհերի ցանկը, մասնագիտությունների ցանկը կսահմանի կառավարությունը: Խոսքը բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական ուղղությունների մասին է:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 165 ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՄԲ 11-ՐԴՆ Է

«Աշխարհի տնտեսական ազատությունը 2022»-ի տարեկան զեկույցի տվյալների համաձայն, Հայաստանը 11-րդ հորիզոնականում է:

Նշենք, որ 2016թ. Հայաստանը եղել է 29-րդ տեղում, 2017թ.՝ 27-րդ, 2018թ.՝ 18-րդ, իսկ 2019թ. զբաղեցրել է 17-րդ, 2020-ին՝ 11-րդ հորիզանականը:

Զեկույցում ներառված է 165 երկիր: Հայաստանի վարկանիշը 10 հնարավորից կազմել է 7,84: Զեկույցը չափում է տնտեսական ազատությունը՝ վերլուծելով մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ պետական ծախսերն ու հարկումը:

Առաջատար եռյակում են Հոնկոնգը, Սինգապուրը եւ Շվեյցարիան:

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 12,9 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Հայաստանի Կենտրոնական բանկը վերանայել է տնտեսական աճի իր կանխատեսումը, այսպիսով՝ 4,9 տոկոսի փոխարեն կանխատեսվում է 12,9 տոկոս տնտեսական աճ:

Կենտրոնական բանկի պարզաբանմամբ, դա պայմանավորեց հիմնականում պահանջարկով: Ծառայությունների, շինարարության ոլորտներում հսկայական տարբերություններ կան, որոշակի տարբերություններ կան նաեւ արդյունաբերության ոլորտում, նաեւ առկա իրավիճակով, երբ աճում են ոչ միայն ոչ պարենային ապրանքների գները, այլ նաեւ ծառայությունների:

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՀԿ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԹԵԴՐՈՍ ԱԴՀԱՆՈՄ ՀԵԲՐԵՅԵՍՈՒՍԻՆ

Իսրայելում Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային կոմիտեի 72-րդ նիստի շրջանակներում, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հանդիպել է ԱՀԿ գլխավոր տնօրեն Թեդրոս Ադհանոմ Հեբրեյեսուսին:

Նրանք զրուցել են առողջության առաջնային պահպանման օղակի, առողջության համապարփակ ապահովագրության ներդրման, էլեկտրոնային առողջապահության եւ ոլորտի այլ բարեփոխումներից, ԱՀԿ-ի հետ սերտ համագործակցությամբ իրականացվող ծրագրերի եւ ֆեռքբերված պայմանավորվածությունների ընթացքից:

Քննարկվել է նաեւ միջազգային մակարդակով համաճարակային սպառնալիքին պատրաստվածության շուրջ իրավական փաստաթղթի մշակման եւ ընդունման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ կարեւորելով երկրների պատրաստվածությունը հնարավոր համավարակների հաղթահարման գործում:

COVID-19. ԳՐԱՆՑՎԵԼ Է ՎԱՐԱԿՄԱՆ 2 575 ԵՎ ՄԱՀՎԱՆ՝ 7 ԴԵՊՔ

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, Հայաստանում սեպտեմբերի 5-11-ն ընկած ժամանակահատվածում հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 2575 դեպք:

Դեպքերի ընդհանուր թիվը հասել է 439 հազար 302-ի, որից 425 հազար 531-ը՝առողջացման, 8669-ը՝ մահվան ելքով:

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում առողջացել է 2172, մահացել է 7 քաղաքացի: Կորոնավիրուսային հիվանդությունից այս պահին փաստացի բուժում է ստանում 3410 բուժառու:

Մեկ շաբաթում կատարվել է 7 հազար 446 թեստավորում:

Թեստավորումների ընդհանուր թիվը հասել է 3 միլիոն 198 հազար 646-ի:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

19.09.2022 Բարեկենդան՝ Վարագա Սուրբ Խաչին

19.09.2022 Սիմեոն Սյունակյացի հիշատակության օր

20.09.2022 Մեծ Վարդանի դստեր՝ Շուշանի հիշատակության օր

Սուրբ Շուշանը Վարդան Մամիկոնյանի ավագ դուստրն էր, որին նախապես Վարդենի էին կոչել, բայց հայոց պատմության եւ վարքաբանության մեջ հայտնի է Շուշան փաղաքշական անունով: Նա ամուսնացած էր վրաց Աշուշա բդեշխի որդի Վարսգենի հետ: Չնայած նրանք 3 տղա եւ 1 աղջիկ ունեին, սակայն բդեշխ ամուսինը, կրոնափոխ էր եղել եւ ամուսնացել պարսիկ Պերոզ իշխանի զոքանչի հետ: Իսկ Շուշանը եկեղեցուն կից մի փոքրիկ տնակում, ապրում էր աղոթքներով՝ միշտ մերժելով իր ամուսնու դավանափոխ լինելու առաջարկներն ու սպառնալիքները: Սուրբ Շուշանիկը 7 տարի անընդմեջ իր ամուսնուց հալածվում է՝ ապավինելով միայն իր աներեր հավատին առ Աստված եւ պապից՝ Սուրբ Սահակից իրեն կտակված Սուրբ Ավետարանին: Սուրբ Շուշանը 470 թվականին իր կյանքն ավարտում է մարտիրոսական մահով: Ըստ Ոխտանես պատմիչի, նրա գերեզմանը Ցուրտավիում է:

24.09.2022 Սուրբ Գեւորգ քաջամարտիկ զորավարի եւ Ռոմանոս երգեցողի հիշատակության օր

ԹԵԺ ԳԻԾ

ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն - **112***
*Պարեկային ոստիկանություն - **112***
*Հրշեջ-փրկարար ծառայություն - **112***
*Պահակային ոստիկանություն - **125***
*Գլխավոր տեսչություն - **126***
*Տեղեկատու բյուրո - **118 08***
*Քաղաքապետարանի թեժ գիծ - **272-22-22***
*Առողջապահության նախարարության թեժ գիծ - **15-05***
*Ժողովրդական պաշտպան - **299-58-98, 292-24-79***
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - **1481***
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն - **114, 240-40-04***
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն - **227-50-40***
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ - **16 700, (+995 32) 5 000 777***
*Ջրամատակարարման թեժ գիծ - **293-11-11***
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - **(593) 50-42-52***
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - **231-03-41, 231-04-21***
*Երկաթուղային կայարան - **1331, 2199010***
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - **(599) 74-73-73***

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՍԿՍՈՒՄ Է ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄԸ

Թբիլիսի քաղաքապետ Կախա Կալաձեն 2022 թվականի սկզբին հայտարարեց վթարային շենքերի ապամոնտաժման քաղաքապետարանի ծրագրի մասին, որի համար մայրաքաղաքի բյուջեից հատկացվել է 20 միլիոն լարի: Քաղաքապետի խոսքով, մայրաքաղաքում հաշվառված է 10 հազար վթարային շենք:

Ըստ Կախա Կալաձեի, արդեն անցկացվել է առաջին վթարային մասնաշենքի ապամոնտաժման մրցույթը, որին մասնակցել է երկու ընկերություն: Հաղթող ընկերությունը նախագիծը իրականացնելու է 6,1 միլիոն լարիով:

- Առաջին փուլում ծրագրված է Սամգորիի շրջանում վթարային 4-րդ կարգի շենքերի ապամոնտաժումը: Այդ աշխատանքները կսկսվեն ընթացիկ տարվա հոկտեմբերին: Շինարարական աշխատանքները կշարունակվեն հաջորդ երկու տարվա ընթացքում: Նախագծի շրջանակներում, բնակտարածությամբ կապահովվի 36 ընտանիք, որոնք այս պահին քաղաքապետարանի ֆինանսավորմամբ տեղափոխվել են այլ բնակտարածքներ,- հայտարարեց Կախա Կալաձե՝ հայտարարելով, որ քաղաքապետարանը զուգահեռ մշակում է եւս 12 վթարային շենքերի ապամոնտաժման նախագիծը:

ՍՊՈՐՏ

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԵՎՐՈԲԱՍԿԵՏ 2022». ԳԼԽԱՎՈՐ ՊԱՐԳԵՎԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 1-ին Թբիլիսիի նորակառույց մարզապալատում մեկնարկած բասկետբոլի Եվրոպայի առաջնությունը շարունակվեց Գերմանիայում, որտեղ խմբերում առաջին չորս տեղերը զբաղեցրած թիմեր շարունակեցին մրցապայքարը մայրցամաքի ուժեղագույնի կոչման համար:

Առաջնության 1/8 եզրափակիչ փուլում Թուրքիան զիջեց Ֆրանսիային (86-87), Սլովենիան հաղթեց Բելգիային (88-72), Գերմանիան՝ Մոնտենեգրոյին (85-79), Իսպանիան՝ Լիտվային (102-94), Լեհաստանը՝ Ուկրաինային (94-86), Ֆինլանդիան՝ Խորվաթիային (94-86), Իտալիան՝ Սերբիային (94-86), Հունաստանը՝ Չեխիային (94-88):

Քառորդ եզրափակիչ փուլում Իսպանիան հաղթեց Ֆինլանդիային 100-90), Գերմանիան՝ Հունաստանին (107-96), Ֆրանսիան՝ Իտալիային (93-85), Լեհաստանը՝ Սլովենիային (90-87): Երեկ, ուշ երեկոյան կայացան կիսաեզրափակիչ՝ Լեհաստան-Ֆրանսիա (54-95) եւ Գերմանիա-Իսպանիա հանդիպումները:

ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում եզրագիծը հատեց հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունը:

Մրցաշարին մասնակից վրաց մարզիկները, ցավոք, հանդես եկան հնարավորություններից ցածր եւ իրենց ակտիվում գրանցեցին ընդամենը երկու արծաթե մեդալ: Պատվանդանի երկրորդ հորիզոնականը զբաղեցրին Նուգզար Ծուրծումիան (55 կգ) եւ Լերի Աբուլաձեն (63 կգ):

Ինչ վերաբերում է Հայաստանի թիմին, ապա 97 կգ քաշային կարգում Արթուր Ալեքսանյանը չորրորդ անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը: 77 կգ քաշային կարգում Հայաստանի ներկայացուցիչ Մալխաս Ամոյանը նվաճեց բրոնզե մեդալ:

Երեկ՝ սեպտեմբերի 15-ին, Բելգրադում մեկնարկեց ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունը:

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ժայռակոփ վանք Հայաստանում: 7.Նոյի որդիներից: 9.Լեռնաշղթա Իտալիայում: 10.Համո Սահյանի բանաստեղծություններից: 12.«... այս գիշեր արթուն մնանք» (ժող. երգ): 13.Հեղուկը դուրս մղելու սարք: 15.Բանկային գաղտնաթիվ: 16.Հեղուկ մետաղ: 19.Վրաստանի մամուլի նախկին խոսնակ ... Գագլոեւա: 21.Թբիլիսիում հայտնի հայ աշուղ ... Գուրջի: 23.«... հայկական գինի է»: 24.Կինոյի եւ թատրոնի ռուս խորհրդային դերասանուհի ... Մորդյուկովա: 29.Վրացական վանքային համալիր Թբիլիսիում: 26.... եւ ահյակ: 27.Ատամի պարսկական մածուկ: 29.Տանը պատրաստված: 32.Ավա..., պարա...: 33.Թագավորական, պալատական: 36.Ռաֆֆու պատմավեպի հերոս: 39.Բրիտանացի հանրաճանաչ ռոք-երաժիշտ, «Բիթլզ» երաշտական խմբի կազմակերպիչներից՝ Ջոն ...: 41.Համադասական շաղկապ: 42.Քաղաք Հայաստանում: 43.Շուտ-շուտ, շտապ: 45.Քամել, կաթը հանել: 47.Հնգաստող հյուրանոց Բաթումիում: 50.Եպիսկոպոսություն, առաջնորդություն, Առաքելական եկեղեցու անբաժան մաս: 51.Շատ թունավոր օձի տեսակ: 52.Իգական անուն: 54...եզրափակիչ փուլ: 56.«Ինչպես ...ն ու բարդին» (ժող. երգ): 57.Հին հունական ռազմի աստվածը: 58.Փոքր դաշտ, տնամերձ հողամաս: 60.Սասունցի Դավթի թշնամին: 61.Գետ Վրաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Միեր Մկրտչյանի մարմնավորած դերը «Եռանկյունի» ֆիլմում: 2.Թերակղզի Եվրոպայում: 3.Պատասխանի տեսակ: 4.Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործություններից: 5.Նորվեգացի բեւեռախույզ, գիտնական, նշանավոր հումանիստ: 6.ԱՄՆ-ի նախագահներից: 7.Մաշտոցյան զինվոր: 8...., այսօր, վաղը: 11.Հեռուստացույցի մակնիշ: 14.Լարան, թոկ: 17.Սերբիայի դրամական միավորը: 18.Բովանդակություն, էություն, գոյություն: 20.Գետ ՌԴ-ում: 22.Հայ երգի Մեսրոպ Մաշտոցը: 23.«Միգ» կործանիչի ստեղծողը ... Միկոյան: 28.Մուգ արյան գույնը: 30.Քաղաք Հնդկաստանում: 31.Մակերեսի չափման միավոր: 34.Հյուսնի գործիք: 35.Վրաց գրող Նոդար Դումբաձեի գրական հերոսներից: 37.Ալկոհոլային խմիչք: 38.Օժանդակ բայ: 40.Նախադասության գլխավոր անդամ: 42.Թաթար-մոնղոլական արշավանքների ղեկավարներ՝ Լենկ ...: 44.Մաշտոցյան այբուբենի տառ: 46.Հունգարացի կոմպոզիտոր: 48.Ակսել Բակունցի ջրվոր հերոսը ... Մարգար: 49.Տատիկի թելատու գործիքը: 51.Բանտ-ամրոց Փարիզում: 53.Սեղանի խաղ: 55.Սիբիրյան երկար գետ, Ենիսեյի վտակը: 59.Մեխ, ամրացնող միջոց:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Ռոգան: 8.Երեկո: 10.Պիես: 11.Կախ: 13.Իգուան: 15.Ասեկոսե: 17.Վրան: 18.Լար: 19.Ընկեր: 21.Գարի: 22.Գան: 23.Պռատ: 27.Անել: 29.Էրատո: 32.Նախ: 33.Բութ: 35.Որոր: 36.Աշորա: 37.Լիստ: 39.Վեհ: 42.Վատտ: 44.Ֆաթիմա: 46.Փլավ: 49.Համ: 50.Ջերծ: 53.Աբել: 54.Խոյ: 55.Դան: 56.Իզուր: 57.Հին: 58.Ռենո: 59.Խամ: 60.Ծոց: 61.Մատ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Դո: 2.Ինին: 3.Կեսար: 4.Գեհեն: 5.Շոկոլադ: 7.Ապավեն: 9.Ոխերիմ: 12.Ասար: 14.Գանգ: 16.Սատանա: 20.Կապար: 24.Ռանետ: 25.Տեխաս: 26.Մորի: 28.Ջուր: 30.Ռոպե: 31.Տոլ: 33.Բոշա: 34.Թախտ: 38.Սրահ: 40.Հրաբուխ: 41.Կիմանո: 42.Վազ: 43.Տիրանա: 45.Թախիծ: 47.Լազ: 48.Վերա: 51.Եդեմ: 52.Ծնոտ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅԵՑԵՈ ՄՈՒՆԱՅԱՐՏՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆԻ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445